տագնապի, ճակատի քայքայման և բոլշևիկների գրգռիչ գործունէութեան առաջն առնել։ Դաշնակից պետութիւնների ճիգերն էլ այս ուղղութեամբ չշափելի օգուտ չկարողացան տալ։ Փորձ եղաւ, յունիսին, երկրի ու բանակի տրամադրութիւնը բարձրացնելու նպատակով, արևմտեան ճակատում ընդհանուր յարձակման անցնելու, բայց յաջողութիւն չունեցաւ։ Այդ փորձը ցոյց տուեց, թէ որքան խորն էր բարոյալքումը երկրի և բանակի մէջ։ Օգտուելով զօրքի դժգոհութիւնից, յուլիսին, բոլշևիկները փորձեցին առաջ բերել դիտուած ապստամբութիւն, որ թէև ճնշուեց, բայց ցոյց տուեց, թէ որքան լայն ծաւալ է ստացել անիշխանութիւնը։

Դրանից յետոյ յարաբերութիւններն աւելի ևս սրուեցին։ Պետական խորհրդակցութիւնը, որ հրաւիրուեց ամառը Մոսկվայում, է՛լ աւելի չեշտեց արտաքին ու ներքին քաոսը և յեղափոխութեան համար ստեղծուած անտանելի կացութիւնը։ Տագնապն ու դժգոհութիւնը արտայայտւում էր բազմաթիւ ձևերով. բանակի ոգին արագ ընկնում էր, դասալքութիւնը դառնում էր տարերային երևոյթ, հաղորդակցութիւնը խանգարւում էր, ապրուստը սղում տարապայմանօրէն, խանութների առջև կազմւում էին երկար ու ջղայնացնող հերթեր. խորանում էր վիհը արդիւնաբերող ու բանւորական խաւերի միջև. բանւորութիւնը դժգոհ էր իր տնտեսական և իրաւական վիճակից։ Գիւղացիութիւնը տրտնջում էր, որ հողաբաժանումը ուշանում է։ Այստեղ ու այնտեղ բռնկւում էին գիւղացիական անկազմակերպ շարժումներ և կալածատէրերի արտաքսումներ։ Կառավարութիւնը հեղինակութիւն և ոյժ չունէր այս բոլորի առաջն առնելու, անգամ վարչապետ Լվովի հրաժարումից և ա՛յն ժամանակւայ հոգիների վեհապետ Ա. Քերենսկիի վարչապետ դառնալուց յետոյ։

Իբրեւ հակազդեցութիւն այս դրութեան, բանակի սպայութեան և բուրժուական շրջանների մէջ աճում էր անբաւականութիւնն ու դայրոյթը երկրի ղեկավարներից։ Պահանջւում էր ուժեղ ու կտրուկ իշխանութիւն։ Այդ պահանջի արտայայտութիւն հանդիսացաւ, այսպէս կոչուած, կորնիլովեան շարժումը, երբ բանակի որոշ զօրամասեր զօր. Կորնիլովի գլխաւորութեամբ քայլեցին մայրաքաղաքի վրա՝ իշխանութեան բռնի փոփոխութիւն կատարելու դիտաւորութեամբ։

Այդ շարժումը թէև ճնշուեց, բայց իր հերթին ուժեղացրեց ծայրայեղ ձախ տարրերը, բոլշևիկներին, որոնց ձեռքին ուժեղ դէնք էր և՛ Սահմ. ժողովի գումարման ձգձգումը։ Լայնածաւալ և պատերազմական կեանքով ապրող կայսրութեան մէջ այնքան էլ հեշտ չէր ամենակատարեալ ձեւով ընտրութիւններ կատարելը։ Սահմ. ժողովի պակասը լրացնելու մտահոգութեամբ հրաւիրուեց դեմոկրատական խորհրդակցութիւն։ Հրապարակ դրուեց նախապարլամենտ կազմելու ծրագիրը։ Բայց այդ բոլորը արդէն աւելորդ փորձեր էին։ Երկիրը հասունացել էր ուրիշ դէպքերի համար։ Հոկտ. 25-ին, Պետրոգրադում տեղի ունեցաւ բոլշևիկեան յեղաշրջում։ Կազմուեց ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ։ Ժամանակաւոր Կառավարութիւնը ցրուեցաւ։ Նրա անդամներից ոմանք, ինչպէս և նոր ընտրուած Սահմ. ժողովի